Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ:

Երիտասարդական խորհուրդը կազմված է նախագահից և վեց անդամից: Երիտասարդական խորհրդի նախագահին և անդամներին նշանակում է Պալատի նախագահը: Երիտասարդական խորհրդի նախագահ կարող է նշանակվել ցանկացած փաստաբան, որի արտոնագիրը կասեցված չէ, իսկ խորհրդի անդամ կարող է նշանակվել ցանկացած փաստաբան, ով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի **կանոնագրքով** սահմանված պահանջներին:

Երիտասարդական խորհրդի նպատակն է՝

ա) աջակցել վերջին երեք տարում փաստաբանական գործունեության արտոնագիր ստացած և հետագայում նոր արտոնագրեր ստացող փաստաբանների (այսուհետ՝ Երիտասարդ փաստաբաններ)՝ մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին,

բ) վեր հանել Երիտասարդ փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում առաջացած խնդիրները, ներկայացնել Պալատին և աջակցել դրանց լուծմանը,

գ) նպաստել Երիտասարդ փաստաբանների և փաստաբանների համագործակցությանը, Երիտասարդ փաստաբանների և փաստաբանների ոչ մասնագիտական շփումներին (կազմակերպել ոչ պաշտոնական հանդիպումներ, տարաբնույթ մշակութային և ժամանցային միջոցառումներ),

դ) կապեր հաստատել այլ երկրներում գործող նմանատիպ կառույցների հետ:

Երիտասարդական խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերը հրավիրում և նախագահում է Երիտասարդական խորհրդի նախագահը՝ իր կողմից հաստատված օրակարգով: Նիստերը կարող են հրավիրվել նաև Երիտասարդական խորհրդի անդամների կամ Պալատի նախագահի տեղակալի նախաձեռնությամբ՝ նրանց կողմից առաջարկվող օրակարգով:

Երիտասարդական խորհրդի որոշումները կայացվում են քվեարկությանը մասնակցած անձանց ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում Երիտասարդական խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

Երիտասարդական խորհրդի որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

Երիտասարդական խորհուրդը գործում է «**Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի**» հիման վրա, որը հաստատվել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ (նոր խմբագրությամբ շարադրվել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 28.07.2021թ-ի թիվ 133-Լ որոշմամբ):

Երիտասարդական խորհրդի անդամներն են հետևյալ փաստաբանները.

Արև Հարությունյան ***Երիտասարդական խորհրդի նախագահ***	*Դավիթ Թովմասյան* ***Երիտասարդական խորհրդի անդամ***	*Աննա Աթոյան* ***Երիտասարդական խորհրդի անդամ***	*Եղեգնի Բաբայան* ***Երիտասարդական խորհրդի անդամ***	*Աննա Ստեփանյան* ***Երիտասարդական խորհրդի անդամ***	*Գարիկ Օգանեսյան* ***Երիտասարդական խորհրդի անդամ***	*Արթուր Սարոյան* ***Երիտասարդական խորհրդի անդամ***

Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի՝ «Երիտասարդական խորհրդի նախագահ նշանակելու մասին» 25.03.25 թիվ 129-Ա որոշումը

Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի՝ «Երիտասարդական խորհրդի անդամներ նշանակելու մասին» 23.01.2025 թիվ 72-Ա որոշումը

Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի ՝ «Երիտասարդական խորհրդի նախագահ և անդամներ նշանակելու մասին» 10.01.2024 թիվ 3-Ա որոշումը

Բեռնել երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագիրը

Բեռնել աշխատասենյակից օգտվելու համար հայտեր ընդունելու մասին որոշումը

Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի «Երիտասարդական խորհրդի անդամ նշանակելու մասին» 06.08.2025 թիվ-238-Ա որոշումը

Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի՝ «Երիտասարդական խորհրդի անդամ նշանակելու մասին» 09.01.2026 թիվ 2-Ա որոշումը

Բեռնել ՀՀ ՓՊ նախագահի Ժ/Պ՝ «Երիտասարսական խորհրդի անդամ նշանակելու մասին» 22.10.2026 թիվ 700-Ա

որոշումը